# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## ՀՀ ԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ԵՎ «ԼԵՎՄԵԴ» ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ 09.07.2026թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/37-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «  »Հուլիսի 2026թ.

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապօգնության ծառայություն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սահակ Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼԵՎՄԵԴ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հրանտ Լևոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 09.07.2026թ. կնքված N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/37-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով պայմանագրի կատարման ապահովումը Պայմանագրով նախատեսված ապրանքների վճարումը կատարվում է ապրանքների ընդունումից **հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:**

1.2.Կողմերը համաձայնեցին,որ Պայմանագրի Հավելված N1-ով և Հավելված N 2-ով սահմանված ապրանքների մատակարարումը իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի պահանջի հիման վրա: Առաջին մատակարարումը իրականացվում է մինչև 20 օրացուցային օրվա ընթացքում, իսկ Մատակարարի համաձայնությամբ՝ հնարավոր է նաև ավելի սեղմ ժամկետում: Հետագա յուրաքանչյուր մատակարարումը իրականացվում է Պատվիրատուի գրավոր կամ էլեկտրոնային պահանջը ստանալուց հետո՝ 3 օրացուցային օրվա ընթացքում:

1.3. Սույն համաձայնագրով ուժի մեջ են դրվում Պայմանագրով սահմանված բոլոր քանակները,որոնք ենթակա են մատակարարման սույն համաձայնագրի պայմաններին համապատասխան:

### 2.Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/37-1» ծածկագրով Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից,կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Հանրապետական ՇտապՕգնության Ծառայություն»ՓԲԸ | «ԼԵՎՄԵԴ»ՍՊԸ |
| Հասցե՝ք.Գյումրի,Մազմանյան 3բ | ք.Երևան,Նոր Նորք Մառ 5 |
| ՀՎՀՀ 05500411 | բն.՝ 38Փ/Դ՝ 0079 |
| «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»ՓԲԸ | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| | ՀՀ 220302944735000 |

Հ Հ 1570078724667200
Տ ն օ ր ե ն ՝ Ս ա հ ա կ Հ ա կ ո բ յ ա ն

--------------------------------------------
(ս տ ո ր ա գ ր ո ւ թ յ ո ւ ն ) Կ.Տ

Ստորագրող

ՍԱՀԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ

3711840906

2026-07-13 14:34:48 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հ Վ Հ Հ 01096997
Տ ն օ ր ե ն ՝ Հ ր ա ն տ Լ և ո ն յ ա ն

------------------------------------------
(ս տ ո ր ա գ ր ո ւ թ յ ո ւ ն )Կ.Տ .

Ստորագրող

ՀՐԱՆՏ ԼԵՎՈՆՅԱՆ

3101970687

2026-07-10 18:23:53 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից